





ՆԱԽԱԿ ԲՈՒԿԱՅԻՑ

Հոկտեմբերի 26-ին

Ստոյգ աղբիւրներէն շատաւ քան հազարից քան, որ հանգուցեալ տիկին Կատարինէ Մ. Լազարեան իր մահից առաջ, կտակել է Լազարեան ճեմարանին 40,000 ռուբլ, Ս. Պետրոսովի հայոց եկեղեցուն 20,000 ռ., Մոսկովայի հայոց եկեղեցուն 10,000 ռ.: Յիշեալ կտակի գոյութեան և բովանդակութեան լուրը Լ. ճեմարանի արդի հոգաբարձու իշխան Արամիլի-Լազարեանցը զբաւառ կրկնով յայտնեց հոկտեմբերի 23-ին Լազարեան ճեմարանի նոր վերահասուչ Գ. Քանաչեանցին: Այսպէս, ուրեմն, ճեմարանիս մէջ ուսում և կրթութիւն ստացող 28 թոշակաւորների թիւը այսուհետեւ ևս առաւել պիտի բազմանայ պէրճ և անմահ Լազարեանց վերջին շահագործող առաքնութեան և ողորմածութեան շնորհիւ:

Սրանք թէ մեր միւս հարուստ մեծատուններն էլ, հետեւելով Լազարեանց առատաձեռնութեան, նոյնօրինակ նուիրատուութեամբ մի մի կենդանի կրթող կանգնէին իրանց յիշատակին:

Ձրանալ ներկայ ժամանակս նուիրելու իր լուսման ազգային կրթութեան գանձարանին, նշանակում է օտարանալ ազգութիւնից. մտքը կոյրը և թուլահաւատը միայն կարող է չը ճանաչել այն ընդհանուր ողորմութիւնը, որ օր աւուր նշմարում է աւստիացի ազգայնաց մէջ կրթութեան գործի վերաբերութեամբ: Եթէ մեր ազգը իր նւթական սուղ միջոցներով կարողանում է հարկաւոր ծխական ուսումնարաններ պահպանել և լուստարութիւն ծաւալել իր զաւակների մէջ, որչափ ևս նա աւելի կանէր, եթէ միայն հարուստները, վերջապէս, հաւատ ընծաւելին նրա անկեղծ ձգտումներին և առատօրէն օգնութեան ձեռք կարկառէին նրան: Համարձակ կարող ենք պնդել, որ ազգային կրթութեան նուիրական գործին մասնակից է մեր ժողովրդեան ամենայն դասակարգը, բացի զբաւառաւոր, հարուստներից: Խօսքս ընդհանրութեան վրա է և ոչ բացառութեան. մի ժողով գործն չի բերի, բայց ուրանալ միանգամայն հարուստների առատաձեռնութիւնը մենք իրաւունք չունենք. ահա տալանդը, երբ լուր տարածվեցաւ կովկասեան համալսարանի հիմնադրութեան մասին, թիֆլիսի քաղաքային վարչութեան օրինակից դրոված մեր մի քանի մասնաւոր անձինք մեծամեծ գումարներ սկսեցին նուրբ այդ գործին:

Արդ, որովհետեւ կովկասեան համալսարանի գործը չափազանց երկարելի է զեռ ևս, լուսչը լինի արեւօք, որ հայ նուիրատուները իրանց ժողոված գումարներին մի այլ գործադրութիւն տային: Ի նկատի պէտք է ունենալ, որ մեր ծխական ուսումնարանները ժողովրդեան մէջ տարրական ուսում են ծաւալում: Լազարեան ճեմարանը, Ներսիսեան դպրոցը և մինչև անգամ Գեորգիան ճեմարանն էլ ուսուցողի միջոցով ուսում և կրթութիւն են մատակարարում մեր պատանիների համար: Իսկ

բարձր ուսման հայթայթելու մասին ոչ ոք, կարծես, չէ հոգում: այս աստիճանով մեր հայ հասարակութիւնը մի քայլ անգամ չէ արել իր կողմանէ: Սակայն բարձր ուսման պահանջը խիստ և անուրանալի է. իւրաքանչիւր տարի հարկաւոր հայ երիտասարդներ միջնակարգ ուսումնարաններում աւարտելով, դառնում են անտուն, անտէր պանդոխտներ: Եւ յայտնի չէն այն դասը զրկանքը ու խռնողութեանը, որոնց ներթափում են հայ ուսանողները ուսուցող մայրաքաղաքներում, ուր նոքա անդադար խուռն թաղութեամբ գիտում են իրանց ուսման ծաւալը յազգեցնելու համար: Մինչև այժմ ուղի մտածել սովորելու այս աշխոյժ երիտասարդների մտաւոր, բարոյական և ֆիզիքական վերաբեր. երբ պիտի վերջ գրվի նրանց պարբերական թշուառութեանը: Այս հարցի լուծումն կախված է մեր հարուստ ազգայնաց բարի ցանկութիւնից. բազմաթիւ թոշակներ հիմնելով Ռուսաստանի գանազան համալսարաններում և բարձրակարգ ուսումնարաններում յօգուտ հայ ուսանողների, մեր հարուստները մասամբ կատարած կը լինէին իրանց սրբազնագոյն պարտաւորութիւնը ազգիս վերաբերութեամբ: Ով ակնհայտ չէ, թող լսէ:

Նամակս վերջացնում եմ հազարիցով ձեզ մի տխուր լուր ևս. անագորոյն մահը կրկին մի նոր զոհ խնց: Մոսկովայի հայ ուսանողների միջից երեք օր դրանից առաջ ուսանողները թաղեցին իրանց լեզուազէտ ընկերակիցներից մինին, որ կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանեցաւ: Ս. Պետրոսովի հայ ուսանողները անցեալ տարի զրկվեցան երկու ընկերներից, որոնցից մինը իրաւաբան էր, միւսը բժիշկ: Երկուսն էլ իրանց ընկերների օգնութեամբ էին ապրում իրանց չքաւորութեան պատճառով:

Վերջիշխալ տխուր օրինակներից յետոյ, ուսանողների դրութիւնը մայրաքաղաքներում կարօտ չէ աւելորդ մեկնութեան:

Խ. Ննգիրարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք իշխանաւոր հանգրանանցից 8 ռուբլ Ժողովուրդի Գործերի լրագրի բաժանորդացին: Առաջվայ 648 ռուբլ 53 կօպէկ բաժանորդական գումարի հետ, կանի 656 ռուբլ, 53 կօպէկ:

Ենթակալութեամբ ստացանք պ. Կամար Տէր-Կաթեանցի հեղինակած «Русское Слово» նոր դասագիրքը ուսերկն լեզուի: Դա հինգերորդ տպագրութիւնն է և տպված է Բ. Մարտիրոսեանի տպարանում: Թիֆլիսում, ներկայ 1881 թիւն: Գինը 45 կօպէկ:

Ստացանք պ. Սարգիս Տէր-Մելիքեանցի հեղինակած «Գեորգի 30 ռուբլ պ. Քիւրքեանին հասցնելու» Մեծ-Վարաբլիսի հայոց դպրոցի հոգաբարձու թիւնից, որ գումարից 20 ռուբլ Անիի աւերակ-

ների ժողովածուի գինը, իսկ 10 ռուբլ այդ պատկերների համար մի ստէրէ օսկօ պատկերը: Նպատակով կը հասցնենք փոքն էլ, նամակն էլ պ. Քիւրքեանին:

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են, Վերկար գեղեցիկ օրերից յետոյ ամսին 24-ին ձիւն եկաւ և տեղեկութիւն օր: Ձիւնին հետեւեցին անձրևները և ցուրտ օրերը: Առաջին հարկաւորութեան միջոցները հետեւեալ գներն ունեն. ալիւրի պուզը արժէ 1 ռ. 40 կ., մսի ֆունտը 8 կ., խզը 50 կ., պանիրը 22 կ., սոխի պուզը 30 կ., կաղամբը 40 կ., մի հաւ 40 կ., վառիկը 15 կ., երեք ձու 5 կ., միջակ գինիի թունդին 60 կ., իսկ մրգեղէնները աւելի էժան են, այնպէս որ պուզը ծախվում է 40 կօպէկով: Այս տարի ամեն բանի էժանութիւն կայ, միայն գինին թանկ է, որովհետեւ կարկուտը մեծ մեծ տուեց հազդի այգիներին:

Մեզ գրում են ՋԻՐԱՅԵԼԻՑ որ ահա երրորդ տարին է, որ Հատրուտ գիւղը կանոնաւոր հոգեւոր ուսումնարան ունի, որ շուշեցի Համալսարան քանոնայ Տէր-Աւետիքեանի յորդորմամբ է բաւկիւր առել: Ուսումնարանի տեսուչ պ. Յովնանէ Տէր-Գրիգորեան ևս ոչ սակաւ աշխատեց նորարաց ուսումնարանի համար: Առաջին երկրորդ և երրորդ տարին ուսուցչի ուսմանը կը կը տարեկան 500 ռուբլ: Թղթակիցը ցաւ է յայտնում որ վարժապետները, որոնք ստանում են այդքան ուսման, խնայում են մի 10 ռուբլ տարեկան: Վշտի լրագիրը բերել տալու համար, Գանէ ձեռքից ձեռք առնելով լրագրի համարները զիւրի միւս գրագէտներն էլ, մասնաւոր վաճառականները, կը կարգային, փոխանակ հազար ու մէկ հայտնաբերելով, անօգուտ թղթախաղով և նորդի խաղաղով ժամանակ անցնելու: Գիւղի աշակերտների թիւը, ինչպէս, աւսում է թղթակիցը, 50-ից չէ աւելանում:

Մեզ խնցրում են տալի հետեւալը: Վերնորոնական վարժարանը Վանի մէջ խնցրում է հայ հեղինակներից և թարգմանիչներից, որ շնորհ առնեն իրանց հրատարակածներից գրէ մի օրինակ նուիրեն Վասպուրականի կենտրոնական վարժարանի գրադարանին, յանձնելով այդ գրքերը թիֆլիսի կենտրոնական գրադաճառանոցը, պ. Նիկողայոս Տէր-Ղևոնդեանցին:

Ինչպէս մեզ հազարում են ԿԱՂՁՈՒՆԻՑ գեր. Գրիգորիս Կախկոպոսը այցելելով իր վիճակը ամենայն տեղ, մեծ քանք է գործ գնում բաց անել հայոց ծխական դպրոցները և որոշել նրանց նւթական աղբիւրները: Այդ նորարաց դպրոցներից զլիսաւորն է Կաղզուանի դպրոցը, որին չորս ամսվայ ընթացքում առաջնորդը երեք անգամ այցելեց, իւրաքանչիւր անգամ տասն օրվայ չափ մնալով քաղաքում, ցոյց տալով ժողովրդին թէ ինչպէս պէտք է կառավարվի դպրոցը: Կախկոպոսը ընտրեց նոր պատգամաւորներ, երեցփոխաններ և հոգաբարձուներ

տեղին երկուսն զպրոցներին համար: Գրիգորիս Կախկոպոսը Աղուանեանին մեծ եռանդով աշակցում են իր գործունէութեան մէջ տեղին անուանի մարդիկ և օտարականները:

Ստացանք Պարսկաստանի Սարմատ քաղաքից, պ. Խոսրով Սրբուհանեանից 4 ռուբլ բաժանորդագրին: Ժողովուրդի Գործերի լրագրի: Առաջվայ 656 ռ. 53 կօպէկ գումարի հետ կանի 660 ռ. 53 կօպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Մինչև որ ընտրութիւնները պատրաստվում էին, պահպանողական կուսակցութիւնը ամեն միջոց էր գործ գնում, որպէս զի զրգուր ժողովուրդը առաջադէմների դէմ էւ որովհետեւ հրէաները Գերմանիայում մեծ մասամբ պատկանում են ազատամիտ կամ առաջադէմ կուսակցութեանը, իշխան Բիսմարկ յարուցեց հակահրէական շարժում: Որպէս պարագրուի այդ հակահրէական հրէշաւոր շարժման պահպանողական, կամ աւելի լուս է աւել յետադէմ կուսակցութիւնը առաջ բերեց պալատական քարոզիչ Շտեօկէրլին, որ քարոզում էր այն միտքը թէ քրիստոնէայ Գերմանիան պէտք է մաքրվի հակաքրիստոնէական տարրից, հրէաներից:

Յետադէմ կուսակցութեան նպատակն էր սահմանափակել գերմանական հրէաների քաղաքական և հասարակական իրաւունքները, կարծես թէ նրանք նոյնպէս Գերմանիայի քաղաքացիներ չեն իրանց հայրենիքի միւս համաքաղաքացիներին: Հաւատարմ իրանց հաճար անկի պրօպագանդաներին, առաջադիմականներին յաղթելու համար, յետադէմները ընտրութիւնների մէջ դուրս բերեցին այնպիսի կանդիդատներին, ինչպէս Կարլօրֆ, Կոմս Մօլտէ, Կոմս Բիսմարկ, Կալսկանցիէրլի որդին, և վերջապէս Շտեօկէրլ, որի կանդիդատութեանը դէմ դրեցին առաջադէմ կուսակցութեան այնպիսի ֆիւնդաւոր մարդուն ինչպէս պրօֆէսոր Բուգօլֆ Վիլհելմէ:

Եւ ահա ընտրութիւնների մէջ ոչ Շտեօկէրլ, ոչ Բիսմարկի որդին, ոչ երեւի Մօլտէ, ոչ Կարլօրֆ ընտրվեցան, այլ ընտրվեցան նրանց տեղ առաջադէմները: Եւ նոյն մարդուն, Շտեօկէրլին, որին առաջ էր տարել ամեն ջանքերով պահպանողական կուսակցութիւնը, հէնց որ նա սեռ-

մօտ քաղաքների մէջ ամենաաղքատն էլ նա լինի:

Համախում ամեն մի արհեստ, որի կատարելագործվելուց մեծ կախում ունի նրա բնակիչների դրութիւնը, յետին աստիճան ողորմելութեան մէջ է դանդում: Կոչակարը օրինակ պատրաստում է իր կոշիկները այնպէս, ինչպէս պատրաստում էին նրա նախնիքը զարերից առաջ, առանց մի նորոգութեան: Թէ որ կամենում էք Համախում ամենալաւ կոչակարի կարած կոշիկների վրա մի գաղափար կազմել, երեակայնէք ձեզ մի եզան կնդակ, միայն թէ մեծութեամբ իւրաքանչիւր հասակի ոտի չափով, նրա յետքի կողմից կէս վերջօկի փայտի կտոր կաշիների մէջ կարած և բեռնելով ամրացրած, որը բազկացնում է մաշկի կրունկը: Մի այդպիսի հրէշաւոր ոտնամանը հագած մանգալը կատարեալ չարարանք է: Մեր դպրոցների երեխաները մեր կոչակարներից կարած մաշկների վրա չը կարողանալով շատ անգամ իրանց հասարակչութիւնը պահելու, վայր են զլորվում, քիթը ու պոչը սրբաշաղախ անում, իսկ ցեխ ժամանակին չը կարողանալով զուրա քաշել աղմի միջից իրանց կնդակները, անճարացած վեր են առնում նրանց իրանց ձեռները և բորկի ոտով տուն գաւնում: Դեռ չեմ խօսում կոշիկների անյարմարութեան մասին ուսումնարանին վերաբերեալ, մի ուրիշ անգամ կաշխատեմ զարձնել պատուելի մեղքների ու չը իրանց ուսումնական կանկների ոտնամաններին վրա, որի յարմարութիւնից մեծ կախում ունի նրանց առողջութիւնը: Վերջիշխալ անյարմարութիւնը շամախեցի կոչակարը ամեն օր տեսնում է և դարձեալ նա զլուրը ցած գցած, մէջքը կուցած, շարունակում է կարել իր կնդակները:

Եւ այստեղ փոքր ի շատ նկարագրեցի Համախում արհեստներից մէկը, բայց միւսներն ևս մի և նոյն աննախանձելի դրութեան մէջ կը տեսնեն, այնպէս որ արհեստները նոր սերունդի աչքին այժմեան արհեստաւորների շնորհիւ այնքան զգուշի են դարձել, որ նա աւելի յօժար է ամսական վեց կամ ութ մանկիով զրադի դառնալ, կամ թէ երկար տարիներով մի աւստրականի մօտ ձրաբար ծառայել, որ նրանցից սովորի ճարտարութեամբ և հնարագիտութեամբ փող վաճառակը: Քան թէ այժմեան աղքատ և ողորմելի արհեստաւորներից միւրը դառնալ, փանի որ շամախեցիները կը շարունակեն արհամարհանելով նայել տեսնականութեան և արհեստների վրա և իրանց փոսած ապրանքների վրայից ճանձ փախցնելով օրերը միջանցել, մի ժամանակ աչք են բացելու և տեսնելու են որ մի Նօթէ կամ այլ օտարազգի Բագու-թիֆլիսեան երկաթուղու մօտ, շամախու և Գեօզայի գա-

ւաններում արքունական ամենապաղաքեղ հոգերից հազարաւոր զենետախներ վեր առած կը բաց անի մի օրինակելի ֆէրմա, նոր սխտանալով կը սկսի պարապել երկրագործութեամբ և տեսնականութեամբ, բոլոր երկրի հարստութիւնը կ'աւելնով, այն ժամանակ խեղճ շամախեցիները իրանց խոր քնից արթնացած, կամայականայ պիտի մտնեն օտարազգու ծառայութեան մէջ, կամ լուս է ասել նրա մշակները դառնան: Ուստի եթէ շամախեցիք կամենում են դացնելու երջանիկ օրեր տեսնել իրանց հայրենի հողի վրա, մի օրնութիւն և անմահ յիշատակ թողել նոր սերունդի համար, ապա նրանք պիտի մի առանձին ուշադրութիւն դարձնեն, ինչպէս վերը յիշեցի, տեսնականութեան և արհեստների վրա: Սրա համար հարկաւոր է նախ և առաջ մի տընտեսական ընկերութիւն կազմել ակցիայով, իւրաքանչիւր ակցիան 25 մանկէթ, այնպէս որ գիւղականներն ևս կարողանան մասնակից լինել այդ ընկերութեան, և ապա տէրութիւնից երկար ժամանակ Բագու-թիֆլիսեան երկաթուղու մօտ ամենայարմար և արդիւնաւոր հող խնդրել, սկսել նոր սխտանալով հազարգործութեամբ և այգեպանութեամբ պարապել: Գրաւորելով ի հարկէ հուսում և հաւատարմութիւն մեզ մի փորձառու հուսում և հաւատարմութիւն անձ (աղքատ): Իսկ քաղաքային հողերից ամեն մի շամախեցուն, որ

կամենում է տեսնականութեամբ պարապել իր կարգով այնքան հող տալ, որքան նա կարող է մշակել:

Նշ որ վերաբերում է արհեստների ծաղկոցնելուն, սրա համար ի հարկէ անուշադիր չէ մնայ նոյն ինքն ընկերութիւնը իր ժամանակին Մի և նոյն ժամանակ հարկաւոր է հետեւել Նամախու արքունական ուսումնարանի մօտ բնակու մի գիւղատնտեսական վարժարան, ուր մի օրով գործադրական կերպով ուսանէին հոգաբարձութեան, այգեգործութեան և շերամագործութեան, որ էլ մենք օտարի օգնութեան կարօտ մնանք, այլ մեր ուղիքը լինեն մեր ընկերութեան զեկաւարները: Մինչև երբ պիտի արքայ չը հասկանանք մեր օգուտը և մինչև երբ պիտի բնութեան հարստութեան մէջ քաղցած և սոված մեռնենք: Բայց ունեն, որ այդ իմ խոսքս համաքաղաքացիների համար ձայն բարբառայ յանգափառի, այլ թէ նրանք կաշխատեն իրաւունքներ, որից կախված է ոչ թէ միայն շամախեցիների, այլ և բոլոր չրջակայ գիւղացիների բարօրութիւնը: Որքան չուտ, այնքան լուս:

Է. Գրիգորեան